

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 4/2

տասնչորսը փետրվարի 2018 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում) (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ լրացումները.

1. Կարգը լրացնել 5.2., 5.3., 5.4. ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.2. Ուսանողի արդյունաբար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունաբար միավորների միջինն է:

5.3. Ուսանողի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

5.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ»:

2. Կարգը լրացնել 6. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

6.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:

6.2. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

6.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների

ամփոփիչ ատեստավորման» վերոնշյալ կարգի (այսուհետև՝ Կարգ) ընթացակարգային դրույթների խախտումներ:

6.4. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 5.1. կետում սահմանված չափանիշների և չափորոշիչների:

6.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են Կարգի ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ